# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

« 8 » հոկտեմբերի 2024 թվականի N: 477 - Ա ք.Գյումրի

ՋԵՄՄԱ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N:259-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի» 11-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Ջեմմա Ադամյանի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ջեմմա Ադամյանին 2024 թվականի հոկտեմբերի 9-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անիպեմզայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

*Իսկականի հետ ճիշտ է՝*